



Պատմաստանաւոր
Յովհաննէս Փիլիճեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՆԻՈՅ

Համակրն ուղղելի են
սո. Վ. Գ. Պալազարեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԿԱՌԱՅՆԵՐՈՐԴ ԽՈՍՏԵՐԵՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՈՆԻՈՅ ԵԱՐԱՐ 30 ՕՐԱՏԱՍ 1880

ԹԻՒ 1152

ՔԱՂԱՔԱՆ

ԱՆԳՂԱՆ. Երկու գրաւոր խնդիրներ, այն է՝ Թուրքիոյ և Աֆղանստանի խնդիրները սատարի կ'ընդունեն Անգլիոյ խորհրդարանը: Յարակից է այն խնդրոյ նաև ինքնատուր տպաւորութիւնն: Իրեւորականաց ոմանք սոյն երեք խնդիրներէն առաջինը, ոմանք երկրորդին, և ոմանք երրորդին վրայ ոչ գարծուցած, իւրաքանչիւրն իւր քննարկը կրփափագի յանձնելը, անոր մէջ վիճարանութիւններ կը շարունակուին: Թուրքիոյ բարենորոգման խնդիրները առ Աֆղանստանի Թուրքիոյ խնդիրն կը յիշուին, սակայն ամենայն խոհմութեամբ զի դեռ լատեցաւ խորհրդարանին մէջ յայտնի արտասանութիւն այն ձախող բառը, որ վեց տէրութեց առաջարկն իրագործելու համար հասկ ուրեմն վառագի պ'իտք լինի: Թուրքիոյ բարենորոգումներն իր/տանական երկիրներէ դուրս սահմանուած լինելով, բոլորովին երկրորդական խնդիրներու կարգի զետեղուած կը թուին, Դիւպայանական բանախօսութեանց և դիւանագիտական շնորհի և անդանդի ձեռք յանձնարարուած կը մնան նորա առժամ: Ամենէն զորաւոր կողմը կամ սպառնական երեւոյթը կրկնայանայ նաւային ցոյցը մը վրայ: որ քստ ոմանց յետաձգման մատուցած է, և բաւ ոմանց եւրոպական համաձայնութեան գէթ չ'ըրև երևուածական ազդեցոյց մատուոր պատրաստութեան մէջ կը մնան: Այսմ կը հաւատարմք երբ կիմանամք թէ ուսումնական Սէնթ-Մերի մարտանաւն իսկուզայի Վոքսերը հասած է նմանապէս Պ. տը Բլէմեր Ռուս ծովագետն: որ էլ պօրոս շոգեւորով Պիլեան կը գտնուէր, հրաման կ'ստանայ անպարանք Բակուզայի Վոքսերը երթալու և Միջերկրականի մէջ պատրաստական գտնուող երեք մարտանաւէ բաղկացեալ ուսումական նաւատորմին հետ միանալու: Եղանակն եւրոպական

ուրիշ նաւատորմեր իրենց տէրութիւններէ հրաման կ'ստանան Արեւիկան ծովք մտնելու Գաթարոյի բերանին մտ գումարուելու: Նոյն իսկ լուծուած կը կարծեմք սոյն միջադէպին նաւատորմի հրամանատարութեան խնդիրն, երբ կ'իմանամք թէ վերոյիշեալ Պ. տը Բլէմեր Ռուս ծովական Անգլիայի Սիմուր ծովականին հրամանատարութեան ներքե կը դուրս, որ ամբողջ միացեալ նաւատորմին ընդհանուր հրամանատար ընտրուած է: Իւ հրահանգ իսկ ընդունած է ի կարեւոր պարագայի ալպանական եղբւրներն երթալու ի նպաստ Մանիէնէ կողմի:

Սոյն նաւային ցոյցէն անդին անցնելու համար եւրոպական տէրութեանց մէն միոյն շահերն չեն կարող ներել, և բաւ այսմ՝ եւրոպական համաձայնութիւնն անդ կը կանխ: Ուստի Թուրքիոյ բարենորոգման խնդիրն այս կերպ նկատողութեան ներքե է խորհրդարանին մէջ:

Գալով երկրորդ՝ այն է Աֆղանստանի խնդրոյն, խորհրդարանն իրաւունք ունի իրեն զուտ բրիտանական կամ ազգային խնդիր նկատել զայն և զգաժուիլ ամեն օր ընդունած հետագրաւորերով: Գլխաւորաբար իւր համարին եղբարց նախնիներու և մանաւորապէս 19 միլիոն անգլիական ոսկոյ արտաքոյ կարգի ծախուց համար, որ Աֆղանստանի պատերազմին պատճառաւ մինչև ցարդ ծախսուած է, որոյ հաշին խորհրդարանին վերջին նիստերէն միոյն մէջ կառավարութեան կողմէ ներկայացու: և որոշուեցաւ որ չ'միլիոնն Մեծն Բրիտանիա վճարէ, և 12 միլիոնը՝ Հնդկաստան: Սոյն 12 միլիոնի վճարումը Հնդկաստանի վրայ բեռնաւորելու որոշումը բաւական յուզումնք հանած է տեղւոյն իսլամութեան մէջ, և որոյ արդիւնքն եղած է իսլամական խալիֆայութեան և Անգլիական կառավարութեան մէջ ցրտութիւն մի: Արդէն մասնաւոր հեռագիրներ կը ծանուցանեն Հնդկաստանի մէջ իսլամ լրտեսներու շատութիւնն,

որք հասարակաց կարծիքը ընդդէմ անգլիական աշխարհաւարութեան գրգռելու կ'աշխատին, և որոցմէ մի քանիներն ձերբակալուել են, որոց քով և բաւական քանակութեամբ կասկածելի թուիներ գտնուել են:

Քանտահարի անգլիական բանակը Էյրապ խանի զօրաց մտնելով արգիլելու համար Օգոստոս 18ին (Ն. Տ.) ըրած յարձակման մէջ բաւական կորուստներ ըրած է: Սիմայէն քաշուած հեռագիրն կը ծանուցանէ թէ 200 անգլիացի, որոց քը սպայներ են, սպանուել և 600 վիրաւորուել են:

Աֆղանստանի այն ձախող խնդիրն մինչդեռ կը ծանրանայ խորհրդարանին վրայ, երրորդ այն է իրլանդացի խնդիրն ևս ոչ նուազ խորհրդարանին ուշադրութիւնը կը գրաւէ: Ապստամբութիւնը զոյգելու համար կառավարութիւնը ոստիկանութեան ոյժը ստուարացնելու հարկ տեսաւ, սակայն սոյն անօրէնութիւնը հարկաւ ընդհանուր ելծաւցոյցին մէջ փոփոխութիւն պիտի մտցնէր, որոյ վրայ բաւական վիճաբանութիւն գլխի վերջապէս ժողովը 29ի դէմ 109 ձայնիւ քուէարկեց: Պ. Յորսթըր, որ իրլանդացի օրծոց նախարար է, և որ ապստամբութեան ծագման վրայ անմիջապէս Տային գացած էր, իւր ուշադրութիւնը դարձուց նախ հսկելու որ գրեհներն զէնքեր չ'մտնեն, և առաջն առնելով համար միջոցներ ձեռք առած է:

Սըր Ուիլիամ Լոքըն նկատողութեան առնելով թէ՛ երբ այն ամեն ձախող գործերն խորհրդարանի մեծ ուշադրութեան կը կարծեմք, Անգլիան ինչպէս կարող է զբաղիլ ծառ տէրութեան մը գործոց մասին միջամտելով, բանակցելով և այլն, սոյն հարցապնդումը կ'ուղղէ երեսփոխանաց ժողովին մէջ և պատասխանին կ'սպասէ:

Ապա ուրեմն Պ. Էլէմսթընի բռնած աշխարհաւարութեան ընթացքն բաւական կնճառի գարծած է, և Մէքլէր Բլէմեր լրագրին ըսածին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՆՍԱՍԻՐԱԿԱՆ

Շարունակելիսն տես լրագրոյս 1146—1147 թիւերը:

Արդէն բացատրեցինք թէ Ազգ մի կողմից էական սարքն երիտասարդութիւնն է քան ձեռութիւնն ու մանկութիւնն: Եւ այս քաջայայտ և զիւրիմաց է, զի ոչ ձեռներն են որ կը գործեն և ոչ մանկութիւն, ալ երիտասարդներն: Ուրեմն հարկ է որ քիչ մ'աւելի խօսիմք երիտասարդութեան վրայ:

Երիտասարդութիւնն գործելու ամեն յատկութիւններն ունի: Իւր սրտի կորովը: Իւր հասնարի թուիւն: Իւր մարմնոյ պնդակազմը՝ զօրութիւն, բնականապէս գործելու նախաձեռնած են, և թէ քանեն կարող են հրաշալիքներ գործել: Իսկ եթէ չ'պատեն կամ կը թմրանան և կամ ողորմութեան շաւիղէն հետեւելով կրփաւորին: Ուրեմն երիտասարդք աշխատութեան հրաւիրուած են ի ընդմիջէ: Նոյն առջին անհուն ասպարէզ կայ, ուր պէտք են գործել: Այս ասպարէզին մէջ երիտասարդաց գործքն հզօր են թաւելու ոչ միայն իրենց անձին պէտքն հզօրաւ ալ նոյն իսկ ուրիշ իրենց նմանաց պիտոյքն հայթայթելու: Կարող և բաւական են նորա աշխատութեամբ իրենց ընտանիքն տպրելու: Այնչաւ ալ ամ իրենց ազգին ոչ տակար լինելու և մարդ կային հանրական շահոց անդամ նպաստելու: Անշաւ մեծ և ընդարձակ է ահա այն

ասպարէզն որ գործելու համար բացուած է երիտասարդութեան առջև:

Այսմ օրինակ ունիմք ոչ միայն պատմութե մէջ շատ և շատ երեւիլ անձինք, որք երիտասարդական աշխուժով հայրենիք, Ազգ, և Ժողովուրդներ մեծամեծ վտանգներէ և տագնապներէ ազատած են, ալ նոյն իսկ մեծամեծ ծառայութիւններ մատուցած են հայրենեաց, Ազգի և ընդհանուր մարդկութեան: Թողլով պատմութեան յիշատակած այդ կորովի երիտասարդներն, որոց անունք անմահացած են ոչ միայն գրաւոր էջերու մէջ, ալ նոյն իսկ հոյակապ արձաններու վրայ, աւելի զգալի և կենդանի օրինակներ ունիմք մեր մէջ: Մասնաւորապէս մեր Զմիւռնիոյ վրայ խօսելով, քաջայայտ է որ ասիէ չ'ուրիշ 30 տարի առաջ մեր քաղաքի ազգային վաճառականներն ոչ թէ վաճառական՝ ալ վաճառականի և սպառողի մէջ տեղ միջնորդներ էին: Ինչպէս և տակաւին մեր վաճառական ըստած ազգայնոց մեծագոյն մասն այսպէս են: Սակայն 30 տարի առաջ Զմիւռնացի Հայ պատանի ոմն, Մեսրոպեան վարժարանի աշակերտ որ իւր ազգային լեզուն, և փոքր ինչ յունարէն միայն ուսած էր, բարձր գաղափար մի կը յղանայ մտքին մէջ: Եղանակն Անգլիա երթալ: և որովհետեւ իւր հայրն ու երէց եղբայրն քաղաքին մէջ եւրոպական ձեռակերտուածներ յաճառողներ էին: սոյն պատանին ևս իւր հօր և եղբոր գործոց իրեն աշակերտ միջամուտ եղած և քիչ շատ ճանաչողութիւն ստացած էր այդ նիւթերուն տեսակաց և արժէից վրայ: Ոչ ոք

տեղեկութիւն ունէր, պատանին իւր հօր և եղբոր հաճութեամբ յանկարծ Անգլիա կը գլխէ: Դիւրին է երեւակայել առջի բերան կրած գլխուարութիւններն, որովհետեւ տեղւոյն լեզուն, քաղաքային օրէնքներն, թաղերն, փողոցներն երկրացւոց սովորութիւններն բարձր ու վարժանմանօթ են նմա: Սակայն պատանին կ'աշխատի փոքր առ փոքր այդ ամենուն վրայ տեղեկութիւններ ստանալ: անգլիներէն լեզուն, նոյն ազգի ճաշակը կը սորվի: վաճառականական գործոց ներածութիւն մի կը ձեռնարկէ, երթալով գործը կ'սկի: շահաւաճառութեան ընդարձակ ասպարէզ մի կը բացուի իւր առջև, և Անգլիոյ գործարարներու արտադրութիւնք գունդագունդ կ'ընթերցան Զմիւռնիա և կը զննուի իւր հօր և եղբոր վաճառատան մէջ: Սոյն գործն հետզհետէ կ'ընդարձակուի: որ և մինչև ցարդ ամենայն յաջողութեամբ կը շարունակուի մեծագումար շահաւաճառութեամբ, որ իւր հայրենի տուն փառք բարձրացոյց, բազմաթիւ անձինք սոյն վաճառատան շնորհիւ կը նպաստաւորին, Զմիւռնիոյ մէջ ազգային հոյակապ Հիւանդանոց կը կառուցուի: մարդասիրական հանգանակութեանց մէջ միշտ կը փայլին: Պատանւոյն սոյն ձեռնարկութիւնն բարի օրինակ հանդիսանալով՝ իրեն հետեւողներ կ'ունենայ: որով իրապէս վաճառական կը զուելու արժանաւոր մի քանի ազգայինք ունեցած և մը այժմ քաղաքին մէջ:

Սոյն պատանին Սպարթաքեան վեհմա. Յովհաննէս է քննարկէ:

(Շարունակելիս)

պէս՝ Պ. Կլէտսթըն մերթ անձնական տկարութե մերթ գիւղադնացութեան պատրուակաւ յաճախ կը բացակայի իւր պաշտօնատեղիէն, որ պէտքի չպարտաւորի օրակարգի խնդրոց ծրագիրը և խնդիրներու ժամանակակէտ մի գծել. որով և կարենայ խուսել հասարակաց իւր վրայ յարձակող զմեծ՝ այն է Աֆղանստանի և թուրքիոյ խնդիրներու նկատմամբ ընկող բանակաւորներէ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ. Աթէնքէն եկած լուրերն կը Դաւանեն թէ բանակը շարժման մէջ գնելու ուրոյնմէն ետք՝ նախարարաց խորհուրդն ուրիշ բաւական կարգադրութիւններ ևս որոշած է: Չինուորաց վերջին երկու գասակարգի բաժիններէն զատ Յունաստանի զէն կոչած է նաև պահեստի գումարտակը մինչև 1850ի բաժինները որոշ այն կարող անձինք, որք այսինչ կամային ինչ պատճառներով իրենց ծառայութեան պաշտօնական շրջանը լրացուցած չեն: Ամեն ուղմամբեր և վառօդ պիտի շտեմարանուին Սալամինայի ծովածոցին դիմացը եղող Ս. Գէորգ կղզւոյն մէջ Թէրե կեդրոն: Պատերազմական գործոց նախարարն համարելով թէ զօրաց շարժումը ձմերուան մէջ տեղի պիտի չունենայ, որոշեց կտաւեայ համազգեստով զգետաւորել զօրքերը: Այս համազգեստից մասին 90 000 հազ. ապսպրուեցան ի Բարիզ և ի Լիոն և 65 000 հազ. Աթէնքի մէջ պիտի պատրաստուին: Զրախումբերն, իրենց պահականոցաց մէջ կրթութե զինի, Յունաստանի հիւսիսային մասին մէջ հաստատուած երեք բանակատեղիները պիտի բնակին: Իսկ Աթէնքի զօրագունքերն և կամաւորաց վաշտերն մայրաքաղաքին շրջակայները պիտի դնեն իրենց բանակները: Նաւախումբը Սեպտեմբերի վերջերք պատրաստուած պիտի գտնուի: Եօրօ գրահաւորն Նաբուի կ'երթայ տեղեւոյն նաւարանին մէջ կատարելապէս նորոգուելու համար: Երկու ուրիշ գրահաւորներ ևս գնելու բանակցութիւն կ'ըլլայ Ամերիկայի հետ: Արքայական հրովարտակի հրատարակուելէն մինչև ցարդ 9.120 կամաւորներ եկած և իրենց ծառայութեանց սկսած են:

ՃԱՅՈՒՆ: Թղթակցութիւնք ազգային շարժում մի կը զարմանն որ յեղափոխութեան յանգեւոր կ'սպառնայ:

Միահամուռ ժողովուրդն ազգային խորհրդաւորանի մը հաստատուիլը կը խնդրէ, և կառավարութիւնն չկամիր շնորհել:

Ամեն կողմէ խնդրագիրեր կը տեղան: Հետեւեալ մասերն ցոյց կուտան անոնց ինչ մասք գրուած ըլլալը:

Աստուած, երբ մարդկութիւնը ստեղծեց, զանի ազատ ըրաւ և տուաւ անոր այն միջոցներն որով պէտք է նա իրեն շնորհուած երջանկութիւնը վայելէ: մարդկութիւնն պէտք է պաշտպանէ այս սկզբունքն, և պահպանէ սոյն պարպիւր: Մարդկութիւնն ազգեր կը յինէ, և օրէնքներ կը դնէ: Բայց մեր երկրին մէջ կառավարութիւնն ինքնին իր վրայ առած է շատ հին ժամանակներէ ի վեր պետութիւնը մատակարարելու պատասխանատուութիւնը: Եւ միթէ կառավարութեան այսպիսի կերպ կարող է երկնից հաւանութիւնն ստանալ:

Բացարձակ կառավարութիւնն ամենէ հին ապականութեանց մեծագոյնն է, հասարակաց կարծիքն զքաջանքէ սահմանադրական կառավարութիւն, զոր Ձեր Վեհափառութիւնն իւր գահակալութեան առթիւ մեզ փոխադրաւ:

Կառավարութիւնն կրնայ կարծել թէ իւր վարչական եղանակը ամենէ լաւն է. սակայն երբ նա փրկուէ բազմութեան կարծեանց հակառակէ, ապէտաւոր յուզմանց պատճառ պիտի տայ: Երկրի մը անկախութիւնն իւր բնակչաց անկախութենէ կախեալ է: Եթէ ժողովուրդեան մը կողմէ անկախութեան ոգի չեղնիր, և ոչ երկիրը կրնայ իւր անկախութիւնը պահել:

Վերջապէս մենք արթնցանք, և կամայնք որ իբրեւ անկախ ժողովուրդ և իբրեւ պետութե հպատակք մեր պարտքերն զանց ըրած ենք: Ճշմարիտ կ'ընեմք որ ազգային ժողովի մը հաստատութիւնը հրամայելէ կամ մերժելէ կախեալ է ճարտի գոյութիւնն կամ կործանումը:

Լ. Ռէֆրէ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

Ապրիլ 18ի պայմանագրին գործադրութեան համար տէրութեանց կողմէ Բ. Դրան տրուած երեք շաբաթուան պայմանագրով արդէն անցած է առանց սպառնացուած նաւային ճոյղ տեղի ունենալու: Որովհետեւ յիշեալ պայմանագրի մասին Բ. Դրան ըրած նոր կարգադրութե մը առաջարկութիւնն բնականապէս յետաձգման արդիւնք պէտք էր ունենալ:

Բ. Դրան ևս այն մասին չէր կարող Խորհրդի կերպիւ վարուիլ ի նկատի ունենալով Ալպանիական միութեան խիզախ գործունէութիւններն, որք հակառակ ի գործ գրուած խաղաղարար միջոցներու հետեւեալէ կ'ընդարձակուին: Արդէն ալպանիացի վեց գլխիներ իրենց խումբերով բանակած են Մազուր, ի կարեւոր պարագայի պատրաստ լինելով գիմարելու եթէ երբէք Տուլիսոն Մեթէնէ կրօյի յանձնուելու սկիզբ

լինի: Ասոնք Երօտրայէն Տուլիսիօ փախած էին լուր տունով թէ կայսերական քովինէր Ռիզա բաշան զիրենք ձերբակալել հրամայած է: Հաւանականօրէն Ալպանիական միութիւնն առաւել լայնի վշտանայ իմանալով այժմ Բ. Դրան որոշումը, որով Տուլիսիօն Մեթէնէ կրօյի կը յանձնուի իւր շրջակայիւք:

— Մեթէնէ կրօյի գործէն աւելի կ'ընտոս երկոյթ կ'առնու այժմ Հելլենական խնդիրն, և կը կասկածուի որ սոյն խնդիրն առանց մեծ կամ վտրք արիւհեղութեան չկատարուիր: Իրաւ է որ այս մասին Բ. Դրան արգար առարկութիւններ յայտնեց Եւրոպիոյ առջև. սակայն ասոր դէմ չկողմ խմբագրած պատասխանն ևս միւս տէրութեանց հաւանութիւնն ստացած լինելով տարակոյս չմար որ տէրութիւնք պաշտպանական զօրաւոր պիտի լինին հելլենական խնդրոյն վրէժով գործադրութեան: Նոյն կէտը կը հաստատեն նաև Աթէնքի մէջ եղած այն փոլութեան պատրաստութիւնք, զորս վերք նշանակեցինք:

— Եթե թէ ոստիկանութեան նախորդ նախարար Հաֆէզ բաշային ներում շնորհուեր է:

— Ի պատասխանի Ամերիկեան դեսպանատան պահանջման՝ Բ. Դրան ծանուցած է թէ Պ. Բարսէն Միսիօնարն սպանող ամբաստանուած երեք իսլամներն այս մատերս Պոլիս բերուելով պիտի դատուին:

— Անատոլիոյ արտաքին կարգի տեսուչ Պէրքը և Սայիտ բաշաներն, որոնք պաշտօն ունէին նոյն տեղուանքն պտտուելով ինչ տեսակ բարենորոգմանց կարեւոր լինելը յայտագրելու, Սայրաքաղաքը վերադառնալով Բ. Դրանք գացին: Եւ խորհրդակցեցան առաջին նախարար Վեհափառի բաշային, պատերազմական գործոց նախարարին, և ուրիշ նախարարաց հետ: Ասոնց տուած ծանօթութեանց և ծրագիրներու համեմատ Անատոլիոյ բարենորոգմանց անյապաղ ձեռնարկութիւն պիտի լինի, կը հաստատեն թէ բարենորոգմանք մասնաւոր տեղեր պիտի գործադրուին, նոր յանձնաժողով պիտի կազմուի Եւրոպայէն հրաւիրուած ձեռնհաս անձերէ, հանրագումար յինութեանց համար բնիկներէ և տարներէ կազմեալ ընկերութեանց արտօնութիւններ պիտի շնորհուին:

— Եւրօլոս Յոյն լրագիրն շտմուածն դադարման դատապարտուելով, Յունաց Պատրիարքարանն և բաւական պատուաւոր յոյնք յիշեալ լրագրի խմբագրին մեծամեծ նպաստներ կը հոգան: Հայրենասիրական զգացմանց նախանձելի օրինակ:

ՊՍԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

(Տես լրագրոյս 1451 քիւր):

Ես կը տեսնեմ, այն է տիրել ու բացարձակ հրամայել: Եւ համարուած եմ ի սրտէ, զի ուր երկուք մէկտեղ կ'իլին: Անդ երջանիկ լինել երբեք չէ կարելի, հաւատացէք: Ուստի թէ կուզէք որ ես Հիմենեան ջահն առնուիմ ի ձեռս, Բոյլ և խնդիր ըրէք գտնել մէկ գեղեցիկ, և առաւել Անսընապարձ կոչ նորատի որուն վերայ անջինջ փայլի: Համբերութիւն, հնազանդ ոգի, և չունենայ կամք ինքնովի: Երբ որ գտնէք մէկն այսպիսի, կընեմ հարսնիքն առանց խօսքի:

Զ.

Որս եւ Արքայի խոտորումն:

Վախճան տալով իւր այս ճառին, իշխանն հեծաւ գիտապանծ ձին: Վաղեց գտնել մտրակ ի կուշտ՝ որսականաց խումբն որ անշուշտ փութ գալտեսան կ'սպասէին կանաչագեղ ի մէջ դաշտին: Նա անցնելով շատ մարգերէ իւր որսորդներն հա կը գտնէ: Որոնք ամենքն ի միասին դաս դաս վազեն անդիս անդին: Որոնց ձայնէն վարհուրելով անտառներուն հիւրերն ահով հրապարակելով թաւուտ տեղեր որ չհասնի նետ մահաբեր: Թագաւորին հրամանաւ կ'սկսանի որսին արշաւ: Գլխան շուններն այն սքրալեւ եղջերազարդ հօտից ետեւ: Որսականաց պարուց ձայներն ու ձիերուն սուր խրխիլներն հրդըղղրեն անտառն ամեն, արձագանգներն ալ կը կրկնեն: Իրենց այս միւս այն, թաւ անտառին խորերուն մէջ տեղ մի ներքին Մեր որսորդները կը սահնէ, ու անկասկած կը թափառին: Ասոր իշխանը ինքնովին որսի զբաղած բոլորովին: Գէպէ կը թէ բախտ, ես չը գիտեմ բռնել ուղի մի հակադէմ:

Թագաւորական բլրէ բլրուր կ'երթար առանց գիտնալու ուր: Խելարեցաւ. չորս գին նայած, հետք չ'երևիր իւր որսորդաց, Ականջ դըրաւ, ոչ շուններու էր լըսելի հաչիւն ազդու:

Է.

Հովուանիք

Արժանափայլ ջինջ առնակներ, ու թանձրախիտ դաւարիներ: Այն կոչս վայրերն մարդուս ոգին գաղտնի ահով կը մոզէին: Բնութիւնն այնպէս ծաւալած էր իւր անարուեստ ու պարզ զարդեր: Որ իշխանին սիրտն զմայլած կ'օրհնէր իւր վրէպն մոլորայած: Այն մեծանիւտ անտառներու, վրձն լըրոց ու մարդերու ջրաղ տեսքէն խանդաղատուած, երբ սիրտն եղեր էր դիւրադգամ: Ահա էակ մի հիւսքանջ աչքը առաւ իբրեւ ճանաչ: Էակ անոյշ և շնորհօք անհաւասար ընդ աստեղօք: Ջինջ առնակի մ'ափանց վըրայ հովիւ աղջիկ մ'էր անիկայ, Որ գեղմնազարդ իւր գառնակներ, ինչ ալ ժիր ձեռքը կ'արածէր: Խիստ ամենի սիրտեր անգամ կընար նուաճել գեղմի այսքան, Ծուշանափայլ էր դէմքն անոր, իսկ թարմութիւնը բընաւոր: Անտառներուն շուքին շնորհիւ անաղարտ էր կեցած լըրիւ: Ծուրթերն մանկան շուրթերու պէս, արտեանանց տակ սեւադէս Լուսեղ ասոր կը շողոքողան, երկինք ալ չեն կապոյտ այսքան: Այս վեհ տեսքին վրայ գեղանիշ գորովալից ու ակնապիշ իշխանն անդէն գէպ ի յառաջ կը շողոքուի, բայց մեղմ շառաչ իւր քայլերէն պատճառուելով՝ կուսին հայուածքն ու կեցողութիւնը: Գարձաւ յանկարծ, ո՞հ այլ յայլմէ օրիորդին դէմք կըցայտէ: Նոր վայլ մի ևս իւր վարդապոյն այտերուն վրայ՝ ուր գերագոյն Համեստութիւնն ու պատկառանք վեմ կանգնած են յաղթանակ:

Ը.

Խօսակցութիւն

Այս սիրալիր պատկառանքին քօղին ներքեւ պահուած անգիւն:

ԱՐՁԱՆՈՅՍ

Արդային վարչութեան կողմէ հետեւեալն յուշարկուած է մեզ ի հրատարակութիւն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արդային վարչութիւնը արժան կը դատի ծանուցանել քաղաքին Հայ հասարակութեան , որ գործողական տարեկան չրջանի հանգիստը լրացած լինելով՝ յառաջիկայ Սեպտ. ամսոյն ինչպէս որ կ'ընեն վարժարանները պիտի բացուին և դաստիարակութիւնները պիտի սկսին : Արդէն սոյն վարժարանաց ներքին բարեկարգութեան , նիւթական մատակարարութեան և ուսումնական պիտոյից հանգանորթեան մասին կարեւոր որոշումներն եղած են : Տնտեսական խորհուրդն գործողները նորոգել տուաւ , յետմեջ խորհուրդն անոնց հիմնական կանոնադրին ու ծրագիրներն ինչպէս նաև գործողական պիտոնէն քաղաքական ժողովոյ միջոցաւ ընդհատ ժողովոյ վաւերացման ներկայացուց : և ընդհատ ժողովոյ յոգևում և յառաջիկային վարժարանաց զարգացման տնօրինեց : Ի հարկէ այս ամեն կարգադրութեանց նպատակն է ազգ. կրթութեան կանոնաւոր և յառաջագիծ ուղղութիւն մը տալ : Արդ կը մնայ ամեն ազգայնաց աշակերտ ուսումնական խորհուրդի ջանից և Ազգ. վարչութիւնը պարտ կը համարի յայտարարել ամեն որդեակեր ծնողաց որ փութան որոշեալ օրն (Սեպտ 1) վարժարան ուղարկել իրենց որդիքը : Տնտես. խորհուրդն ընդունելութեան նոմանակ անելով , որպէսզի յապալման ու բացակայութեան պատճառաւ գժուարութիւններ չծագին , դասակարգութեանց մասին խանգարման առիթ չտրուի : Թէպէտև դպրոցական կանոնադրին և ծրագիրներն մանրամասնութեամբ տպագրուելով ամեն ծնողաց պիտի ուղղուին , սակայն աւանդուելիք ուսմանց վրայ գաղափար մը տալու համար աւելորդ չենք համարիր համառօտ նշա. նակել առայժմ գործողներու ուսման ընդհանուր ծրագիրները :

Սուրբ Եփեսոսեան վարժարան ընդհանուր ծրագիր ուսմանց

- 1 Կրօնք Ս. Գրոց պատմութիւն
- 2 Ընթերցանութիւն
- 3 Խրատանութիւն
- 4 Հայերէն լեզու (հին և նոր)
- 5 Գեղարվեստութիւն
- 6 Պատմութիւն ազգային
- 7 Պատմութիւն ընդհանուր

- 8 Աշխարհագրութիւն
- 9 Թուարանութիւն
- 10 Առողջաբանութիւն
- 11 Բնական գիտութեանց տարերք
- 12 Տնտեսագիտութիւն և վաճառականութեան սկզբունք
- 13 Տոմարակալութիւն
- 14 Պրանսերէն
- 15 Տաճկերէն
- 16 Անգղերէն
- 17 Յուարէն եթէ 10 ուսանողք գտնուին
- 18 Գծագրութիւն
- 19 Երաժշտութիւն ձայնական
- 20 Մարմնամարզութիւն

Սուրբ Հովնաթան վարժարան ընդհանուր ծրագիր ուսմանց

- 1 Կրօնք Ս. Գրոց պատմութիւն
- 2 Ընթերցանութիւն
- 3 Խրատանութիւն
- 4 Հայերէն լեզու
- 5 Գեղարվեստութիւն
- 6 Պատմութիւն ազգային
- 7 Պատմութիւն ընդհանուր
- 8 Աշխարհագրութիւն
- 9 Թուարանութիւն
- 10 Տնտեսութիւն
- 11 Առողջաբանութիւն
- 12 Տոմարակալութիւն (պարզ)
- 13 Բնական գիտութեանց տարերք
- 14 Պրանսերէն
- 15 Գծագրութիւն
- 16 Երաժշտութիւն (ձայնական)
- 17 ձեռագործ
- 18 Մարմնամարզութիւն

Իսկ թոշակի բաշխում եղած է այսպէս
Ծաղկոցի աշակերտաց մէջիւ 3—6—9 ըստ կար
Նախակրթարանի , , 4—8—12 , ,
Ուսումնարանի , , 5—10—15 , ,
Այս թոշակները կրնան վճարուիլ թէ կանխիկ
և թէ գիւրութեան համար տարւան չրջանին
մէջ երեք վճարումով այսինքն Սեպտեմբերին
Յունվար ին և Չապրին :

Նախորդ տարուան անվճար մնացած թոշակներն ներկայ չըլլան հարկաւ պիտի վճարուին :
Ահա ասոնք են այն ընդհանուր տնօրէնութիւններն , զորս Արդային վարչութիւնն պարտ համարեց Հայ հասարակութեան հաղորդել ազգ. երկսեռ վարժարանաց մասին աներկմիտ լինելով , որ ամեն ծնողք և ուսումնասէր ազգայինք պիտի յօժարամիտ փութան իրենց պարտաւոր

ութիւնը կատարել յօդուտ և յառաջադիմութիւն ազգային կրթութեան :

Զմիռնիա , 25 Օգոստոս 1880

Ա. ԱՐԶԱՆԻՆ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վիճակիս Գեր. Առաջնորդ Ս. Հայրն երէկ քաղաքէս մեկնեցաւ վիճակաց այցելութեան ելնելու համար : և մտադիր է հետգհետէ այցելութիւն ընել Մանիսայի , Ղանապոյի , Քրքաղաճի , Աքհիսարի , Պէրկամայի և Գրնդի ժողովուրդոց Գեր. Առաջնորդն նախքան զուղեորին յայտարարած իր Արդային վարչութեան թէ՛ Չատկական հանգէններն կատարելէն զինի որոշած էր թեմական ֆոգովուրդ այցելութեան ելնել , բայց հազիւ թէ կարողացած էր Գուշատայցիքը քանզի վարչական գործերէ զատ ուրիշ կարևոր գործեր արդելը եղած էին սոյն այցելութեանց : Թէ՛ յիշեալ կարևոր գործոց կարգէն էին նորոնսիր Ուսումնական խորհուրդի և անհրաժեշտ աշակերտութիւնն , և յետ այսորիկ երկուց վարժարանաց տարեկան հարցաքննութիւնքն : Թէ՛ սոյն գործերուն յաջորդած էր Գաւառ. ընդհանուր ժողովոյ բացումն և տարեկան չրջանի ազգային խնդրոց քննութիւնն ու կարգադրութիւնն , որոց դիտաւորներն էր ազգային վարժարանաց նոր կանոնադրի և ծրագրի վաւերացումն : Ս. Նախագահն ազգային վարչական ընթացիկ գործոց կարգադրութիւնն Արդային Գաղաքական ժողովոյ հոգածութեան յանձնարարելով վիճակաց այցելութեան ելնելու իւր մտադրութիւնն ի գործ դրաւ :

Ազգ. Բաղ. ժողովն ևս իւր կողմէ կանխաւ չընթերցանեց զիկցի թեմերուն ազգարարելով որ ազգային որևէք խնդիրներ , հայեւներ և այլն ի պատրաստի ունենան , որպէսզի Ս. առաջնորդ ի այցելութիւնն շահաւէտ լինի նոցա , և որչափ կարելի է՝ շուտ կարգադրուին թեմական խնդիրներն :

— Պատուաւ ժան Ուսումնական խորհուրդն քաղաքիս ազգային կրկին վարժարանաց ճեսուշ ընտրեց Սեծ. Մատթէոս Մամուրեան էֆէնտին , և ըստ օրինի յատուկ գրով սոյն ընտրութիւնն Ազգ. Բաղ. ժողովոյ հաւանութեան էնթաքից : Ազգ. Բաղ. ժողովն ևս խիստ օրինաւոր գտնելով սոյն ընտրութիւնն մեծ հաճութեամբ իւր հաւանութիւնը տուաւ ու հաստատեց զիյնեալ Սեծ. էֆէնտին ի պաշտօն Տեսչութեան ազգային կրկին վարժարանաց :

Կ'իմանամք թէ՛ Սեծ. Մամուրեան էֆէնտին ի սկզբան չէ կամեցած ընդունիլ սոյն պաշտօնն

Քաղցրութիւն մի և պարզ ոգւոյ վրեժմանութիւն անդ ի մտոյ Տեսաւ իշխանն ու ապշեցաւ զի միւշ յայնժամ ամարթ ըննաւ իր համարէր կանանց սեռին ունել ճշդիւ սոյն ձիւք անգին : Ուրտուռ մի նոր իրեն համար , թէպէտ յանկամտ սրտէն կ'զգար , Ուստի յուշիկ կըմտնեայ կուսին առ չե , բայց քան թզնա Սեծի մեղմ ու վեհերոտ կ'ըսէ ձայնով մի դողդոջոտ .
Թէ՛ իր որսի ընկերներուն կորուսելով հետքը համարեն՝
Կուղէ գիտնալ թէ անոնցմէ մէկն այս կողմէն անցաւ միթէ :
«Ոչ ոք , Տէր իմ , ձեզմէ ի զատ այս մենաւոր վայրեր աղատ :
Եւ ոչ ուրիշ մէկ ուղևոր երևցած է մինչև ցայսօր :
Ըսաւ աղբիւն , ու վրայ բերաւ , «Տէր իմ , հող մի բնէք բընա :
Իս ձեր քայլերն ուղիղ ճամբան կըդարձունեն յօժարակամ :
Կրկնեց իշխանն . «Կարող չեմ ես փառք տալ երկնից արժանապէս :
Սոյն աղբիւն երկար ատենէ վեր կը յամանեմ ես այս վայրեր ,
Մինչև ցայսօր չեի գիտէր թէ ինչ մեծ գաւառ ունին երկրս :
Սոյն միջոցին իշխանն յորքնած , որ և ուստիկ էր ծարաւած ,
Խոնարհեցաւ գէտ ի վրտակ լուրէն խնել , չկար բաժանի :
«Կեցէ՛ք Տէր իմ , վայրիկ մի ևս ըսաւ աղբիւն ու փութեալէս
վաղեց խրճիթն ու կուսեցէն անօթ մի ձեռքն եկաւ անդէն ,
Տուաւ իր նոր սիրահարին շնորհք իրմէ կըլալէին :
Արքունական պալատներուն ականակուռ ու զարդարուն
Այն բաժաններ բազմաբուստեան իրենց բոլոր գեղորդն ունայն
Չէին կրցած տալ իշխանին այնչափ հաճոյք մի սիրային :
Որչափ հովիւ կուսին ձեռքի կաւէ ամանն եղաւ յարգի :

Թ.

Վերադարձ յարքունիս

Բայց գտնելու համար գիւրին ճամբայ մի որ թագաւորին
Առաջնորդ է գէտ ի քաղաք , անցան անոնք շատ անաւառակ :
Շատ ջրփեմեր ու տաժանուտ խորին ձորեր ապառաժուտ :

Ամեն ճամբու գըլուխ կեցած իշխանն աչք մի չընկալեաց
Պարեպտեմ չէր գանդ աղէր դիտել տեսնել բոլոր վայրեր .
Որոց համար մէկ ծրարկի կընկարէր մտքէն անգիր .
Ձի վերադարձն ըլլայ դիւրին , այսչափ ճարտար էր աչք նորին :
Հովիւ աղբիւր վերջապէս գով անտառի մը մինչև կէս
Առաջնորդեց բերաւ զանի , ուսկից չըրէր իւր արքունի
Ապարանքին բարձունքն ոսկի կ'երեւային ի մէջ դալանի :
Բաժնուեցան . բայց իշխանին սիրտը սիրայ վերքով խորին
Դէպ ի պալատն իւր ոսկեփայլ կըհեւանար նա յամրաքայլ :
Եւ հետեւալ օրը կրկին սիրայ զգալով վերքն ի սրտին
Բարեպտեմ հ զըտաւ ժամ մի , երաւ նորէն զընաց որսի :
Ուրտեղ գարձալ ծառայներէն մէկդի խաւաց վարպետօրէն ,
Եւ ծառերու գաղաթներէն՝ որոց ձեւերն միտքն էր արդէն՝
Դիտեց գըլուսն այն քաղցր ուղին , որ կըտանէր առ հովուհին :
Իշխանն արդէն գիտէր ճշդիւ թ'աղբիւն ունէր հայր մի հովիւ ,
Որմէ ի զատ անգ ոչ ոք կայ , և Դարուհի է անուն նորա :
Թէ քաղցր կեանք մի կըլարեն , կերակուրին է կաթնեղէն ,
Իրենց ըզրենտը կըլինեն ոչխարներու մաքուր բուրդէն ,
Ձոր հովուհին միշտ կ'ողորէր , որով քաղքին պէտք մի չունէր :
Բայց թագաւորն որչափ նայէր կուսին երես սիրահարուէր՝
Այնքան նստիկ իւր հողոյն մէջ կ'զգար զկողմն բոլորքն անշէջ :
Ուստի այս մեծ խնդրութենէն խելքն էր դացեր , կտրծես , զլլակէն :
Ձի առաջին իւր սուրբ սիրոյն գըլուսն ընկեր արժանաւորս :
Դարձաւ պալատն նոյն երկոյ , և առանց տեսն կորուսելոյ
Իրտ մեծ ատենն խմբուեցաւ , ուր թագաւորն զայս խօսեցաւ ,

Թ.

Ս. Դրապարակախօսութիւն արքայի Հաճութիւն ամուսնութեան :

«Մեծ բաղձանքն ձեր համաձայն , որոշեցի արդ. Հիմէնեան

(Պիտք շարունակուի)

սակայն թէ Ուսումնական խորհրդոյ և թէ ուրիշ պատուաւոր ազգայնոց սոյն կարեւոր տնտեսական յարգելու համար միայն խտացած է առժամանակեայ կերպիւ վարել զայն մինչ ցնոր անօրէնութիւնն :

Ըստ մեզ պէտք է որ Զմիւռնիա . որ Մամուրեան էֆէնտիի հայրենիքն է , անոր տաղանդէն օգուտ քաղէ , փոխադարձօրար և Մամուրեան էֆէնտի բարոյագիւ պարտաւոր է իւր տաղանդն չզլանալ իւր հայրենեաց : Ուստի մեծ ուրախութեամբ կը շնորհաւորեմք թէ Ուսումնական խորհրդոյ սոյն օգտակար ընտրութիւնն և թէ Մամուրեան էֆէնտիի ստանձնած փափուկ պաշտօնը :

Մեր վերջին թիւէն զինի գաւառիս Ազգային քննահանութիւնը երկու նիստ ըրաւ մին ի 20 միւսն յ37 Ոգոստոսի ընդ նախագահութեամբ Գեորգի Առաջնորդ Ս. Հօր , և ատենապետութիւն Գ. Գրիգոր Զինկիրեանի :

Օրինաւոր ատենանքացութեամբ հետեւեալ որոշումներն եղան .

Ա. Ժողովոյ նիստերէն վերջէ վերջ 3 անգամ , և աւելի բացակայ գտնուող 7 երեսօտիսանք , իրենցերեւոյ փոխակառ պարտաւորութիւնը կատարած չըլլալուն , ըստ 289 յօդոսմայ ատենական կանոնադրի հրաժարեալ հաստատելու եղանակ , և յաջորդ ներ մնացած չըլլալուն անոնց տեղ ուրիշներն ընտրելու արտօնութիւն տրուեցաւ Ազգ. վարչութեան :

Բ. Գաւառական քննահանութիւնը արեւելեան շրջանը լրացած լինելով Գաւառի վերակայութեան ձեռնարկեցաւ , և պաշտօնի քուէարկութեամբ ատենապետն և ատենադպրոն , իսկ փոխատենապետն և փոխատենադպրոն ժողովոյն միահասու հաւանութեամբ ընտրուեցան որք են .

Ատենապետ . Մեծ Գ. Գրիգոր Զինկիրեան
Ատենադպրոն . Մեծ Գ. Մերկեր Մերկերեան
Փոխատենապետ . Մեծ Գ. Ստեփան Բ. Տէպեան
Փոխատենադպրոն . Մեծ Գ. Ստ. Վարպետեան :

Գ. Գաւառական Դատարանի մասին Պատրիարքարանէ եկած գրին նկատողութեան առիով տեսաւ անոր մէջ թէ կ'ըզրոնակուի ազգ. ժողովն քաւառներու մասին յի արդ յաւելում ըրած , և ի վերջի մասին 600 զրուէն 2000 շուրուշի բարձրացուցած է այսինքն եւ ապաւորելն աւելի չի գումար , և այն վճռարար և առանց կանխաբանակցելով ի վերջի երեսօտիսանութեան այս մասին կարծիքն իմանալու Գաւառական Ժողովն նկատողութեան առաւ նաեւ ի վերջի ազգային արկղին տնօրէնութեան պարտուց ներքեւ պատուով անձուկ կացութիւնն , և իւր ազգատիկ թեմերու , յետին խնդրութիւնն և սակայն Պատրիարքարանի առաջարկն յորդ ելով որոշեց որ ի վերջի ազգային արկղն կ'ըզրոնակուի ժամուց մասնակցելու համար տարեկան 50 արծաթ մէճիտ նպաստ տայ և ոչ մասին որ վանքերու պատկանեալ տուրք մ'է , մենչեւ Զմիւռնիոյ վրէժակին մէջ վանք բնաւ չպտնուիր :

Սոյն խնդիրներն լուծուեցան և որոշումներն եղան Օգոստոս 20ի նիստին մէջ :

Իսկ Օգոստոս 27ի նիստին մէջ հետեւա . խորհրդոյ պատրաստած և Ազգ. վարչութեան միջոցաւ Գաւառական Ժողովոյն հարկաւորած 1980-1881 նոր շրջանի տարեկան ելմտայնոց քննութեան առնուելով ինչ ինչ փոփոխութեամբ ընդ ունեւեցաւ և վաւերացաւ :

ՄԱՆԱԳՈՅԺ

Մեծա . Իփրեմալա Պուրուսուղեան անցեալ շորեքշաբթի ամսոյս 20ին իւր մահկանացուն կնքեց ի հասակի ծերութեան գրեթէ 90 ամաց Հանգուցեալն քաղաքիս պատուաւոր և ուսումնական ազգայնոց դասէն էր , և երկար տարիներ ազգային կարեւոր պաշտօններ վարած , մասնաւոր ազգային վարժարանաց հոգաբարձութեան պաշտօններուն մէջ քրիստոնէական և պարսկ . լեզուի ուսմանց մասին ջնքմ պաշտպան և հսկող լըլինէր , սոյն կարեւոր ուսմանց ազգային վարժարանաց մէջ արդ իւնաւոր լինելուն մեծափափազ քանակաւ , որոց մասին ան-

ձամբ իսկ հմուտ և տեղեակ էր , կը լծուրս ի յատուկ իւր ազնիւ գերդաստանն և բարեկրթ զաւակունքն :

... Խմբագիր ,

Այլէ 5 ամիս առաջ քաղաքիս մէջ մի քանի երեսօտարք համաձայնելով Հայաստանի մեր սովորաւոր եղաւոր համար մասնաւոր հանգանակութեան ձեռնարկեցինք , որոյ արդիւնքն ելաւ 62 1/2 արծաթ մէճիտ , Սոյն գումարն ցուցակաւ հանդերձ անմիջապէս հեղորոնական մասնաժողովն , յաւարկեցինք , և յատուկ նախապէս ինչ րաժ էինք որ նուիրատուաց անուններն և գումարներն հրատարակուին Թէրէֆալէ Էջմէր լրագրին մէջ : Մեր զարմանքն յոյժ մեծ է որ միջեւ ցարդ նոյնին հրատարակութիւնն չտեսուեցաւ : Զմեք կարծեր բնաւ որ հեղորոն Մատեմոլովն մեր հանգանակած գումարն իրել չնչի : Բայն անորման համարած լինի հրատարակութեան , բայն որ անկէ նուազապէս դուրս երն հրատարակած է լրագրաց մէջ :

Վերջին անգամ , այն է՝ ասիէ 15 օր առաջ նախկաւ կրէին հարցուցինք կեդրոն Մասնաժողովին ան զանցառութեան արտօնաւոր , և ուրախ եմք յայտնելու որ այն պահուս ցիր ստացանք կեդրոն Մասնաժողովն որ նուիրատուաց յոյժ ս'ը կ'ուզէ հրատարակելու համար կրցաւ ըսելու թէ ցուցակին օրինակը չու-

նելով պիտի չկրնանք Պատուարժան Մասնաժողովն այն փափաքը կատարել : Վասնորոյ ներկայիս կը յայտնեմք որ բաւական և դժայնցիկ կրճատարմբ տեսնել լրագրին մէջ կեդրոն Մասնաժողովի կողմէ հրատարակուած թէ Զմիւռնիոյ մի քանի երեսօտարքաց մասնաւոր հանգանակութեան արդիւնքն 62 1/2 մէճիտը ստացածն էր : Բայն արդեւ ի վերջի քաղաքիս :

Հաճեցէք ... Խմբագիր շնորհապարտ կացուցանել զմեզ հրատարակութեամբ ներկայիս ,

Զմիւռնիա , 29 Օգոստոս 1880

Կարգէ Գ. Քեֆէպէ-Է-Ն

ՏԵՆԱԿԱՆ ԵՆՐԵՐ

Վեհա . Սովորական գահակալութեան տարեգարձն առ միւս անցեալ երեքշաբթի գիշեր քաղաքիս մէջ անցի ունեցած լուսաւորութիւնն զեղեցիկ տեսարան մի կ'ընծայէր մանաւանդ քարափանց վրայ :

Խիստ գեղեցիկ զարդարուած և լուսաւորուած էին մանաւանդ կաւաճարութեան պալատը , մեծ զորանոց , հիւպատոսարաններն , քաղաքայնութեան երկրորդ Շրջանակի , Երկրորդական շրջանակն , և քարափանց ընկերութեան պաշտօնատեղանքներն , Հայոց Առաջնորդ արանն և այլն : Նոյնպէս մեր նաւահանգիստն զտեսող բոլոր նաւերն , որոց մէջ առաւել կը շրջային օսմանեան պատերազմական նաւերն :

— Նախանգիստ ընդ հանուր կառավարիչ բարձր Միւստիմ բաշա քաղաքիս շրջակայներն կ'այցելէ , և բարեկարգման կարի որ հրամաններ կուտայ վարչական պաշտօնէից :

— Կառավարութեան կողմէ ի գործ գրուած ամեն հսկողութեանց հաշիւաւ գծաւորաբար գողութիւնք և սպանութիւնք պակաս չեն :

— Բաղլարիս մէջ հրատարակուած լրագրներու մէջ հետեւեալ գէտքերն կ'ըկարգամք :

Վերի թաղը բանակաւոր մը առթիւ 2 այր և մէկ կին գաւառի հարուածով փրաւորեցան :

— Պոստ գիւղը մի քանի անձինք կռուելով անոնցմէ մին գանակի ուժգին հարուած մի կ'ընդունի , և հետեւեալ օրը կը մեռնի :

— Մէնիսի ճամբան շոգ եկաւ քի վախճին մէջ , յոյն մի մահճետակաւ մի կ'սպանուի , և մարդ ապանը հարբով մի կը փախչի :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

ԱՅՅՈՒ . Մեր վերջին թիւէն զինի վաճառուներն են . 19 կողով Զարաթ 25 քիւն 227 զրուշի . 17 կողով Խոշրոն 25 քիւն 212-216 զրուշի . և 10 կողով Գարաթ 25 քիւն 212-216 զրուշի :

ՔԱՂԱՄՈՒՏ . Եօթնեկիս մէջ Եղած վաճառուներն են 5500 կենդինար . բանուած 103 զրուշի , իսկ չբանուածը 75 զրուշի կենդինարը :

ՍԻՆ ԶԱՄԻՆ . Նախորդ հաւածքէն գրեթէ 2, 300 կենդինար վաճառեցաւ կենդինարը 70 զրուշի , իսկ սոյն հաւածքէն գրեթէ 2000 կենդինար ի գին 76-78 զրուշի :

ՍՈՒՆԻՆ . Ետեւեկին ընթացիկ արժէքն է օսթիս 3 1/4-4 3/4 ըստ տեսակին :

ՄԱՆԱԳՈՅԺ

Առանցիկ Գերա . Բարոյքի եւ Պատուարժան Ուսումնական խորհրդոյ կողմէ Ամիւռնիոյ Ազգային վարչութեան պաշտօնապէս իմաց տրուած է , որ տեղւոյն ազգային երկսեռ վարժարանաց համար մի հայկաբան դասատու կը խնդրուի , եւ երեք վարժարաններ , որք իրենց ուսմանը հետ ըստ բաւականին անցնեալ քարձուքեան եւս տեղեակ լինին :

Սոյն պաշտօններու ցանկացող անձինք կարող են Ազգ. վարչութեան զիմեյ յառաջնորդարան իրենց կամքն յայտնելու եւ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար :

English Commercial School

Արձակուրդի օրերուն լրանալէն զինի սոյն գործոց կրկին պիտի բացուի առաջիկայ Սեպտեմբեր ամսոյ 8-20ին :

Ուսուցիչ պաշտօնէացիք 14 անձինք են , որոցմէ 3ը Անգղիերէն լեզուի ուսուցիչք են և ներքին : Սոյն առաւելութիւնն հարկաւ մեծապէս օգտակար պիտի լինի մեր աշակերտաց Անգղիերէն լեզուի ուսման մէջ զարգանալու :

Վ. Զ. Պէրքլըր

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆԷ

ՄԵՏԵՕՐԱ

Այս անուամբ և տարուան մէջ մի քանի հատոր լինելու խոստմամբ քաղաքիս մէջ ոկաւ հրատարակութիւն մի Գիւրաթ , Ազգային և Գրեթէ , աշխատասիրութեամբ Մեծ Գ. Մերեանի , և որոյ Առաջին հատորն արդէն բաւական տարածուեցաւ :

Պարունակութեան ընդարձակութիւնն , նիւթերու ընտրութիւնն , գրական ճաշակն , և ժամանակիս ոգւոյն համեմատ յառաջիմական գողափարներու տեսութիւնն , որովք լի են գործոյն ամբողջ 220ի չափ կ'ընեն , մեր Ազգի համար կարեւոր և օգտակար մատենանքէ մին ըրած են զայն :

Մեթեօրայի մէջ մի հատորին գինն է մէկ արծաթ մէճիտի , կը ձախուի իւրիւր , Գ. Մերեան վաճառատունն ի մեծ վեղի խան թիւ 33, և գրատունն ի Սելվիի խան թիւ 17 : Եւ Պոլիս Պ. Միրզա Մերեանի և գրաւսիս Պ. Յովսէփ Կաւաքեանի բով :

ՏԻԿԻՆ ՄՈՆՍՈՐՈ

Թարգմանութիւն Ա. Տեմալ և Օ. Մագէի

Թարգմանութիւն

Ա. Գ. ԳԱՍԷԼԷԹԷՆԻ

Սոյն Թարգմանութիւնն իւր ճարտարահար նիւթովն , բնորդ գրաւն , և գեղեցիկ թարգմանութեամբ միջեւ հիմա ազգիս մէջ գտնուած ընտրելագոյններէն մին կրնայ համարուիլ : Զմիւռնիա տպագրութիւն եղաւրց Տէպեանի գին մէկուկէս ֆրանք :

ԱՌՈՂԶԱՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱԾՈՒՄԸ

Առաջին հաւածքէն

Ամեն ընտանեաց տէր անձերու կարեւոր գիրք մի է , որ իւր ուսողած գիրքիմաց գտնուողն , և արդի գիտութեանց շնորհիւ գտնուած մանկատանութեան պարզ եղանակներովն առաջին կը հանգիստանայ իւր կարգին մէջ :

Թարգմանիւն է տօթէօր Տ. Ս. Փէլիմուլեան անդամ գաղ. առողջաբանական ընկերութեան Կ. Պոլիս տպագրութիւն Պ. Գիւրեմեան

Տէր տպարար ,

Գ. Զ. Գ. ՊԱՆԿԱՆԷՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԻՍ